# Ժամանց

## ԱՍՏՂԱ գուշակ 20 փետրվար

### ԽՈՅ
Ընդհանուր առմամբ բարեհաջող օր է: Բացառված չէ, որ դուք բարձրանաք ծառայողական սանդուղքով կամ ստանաք առավել ձեռնտու աշխատանքի անցնելու առաջարկություն:

### ՑՈՒԼ
Այսօր կարող է ծագել չնախատեսված ֆինանսական խոշոր ծախսերի անհրաժեշտություն: Թերեւս օրվա իրադարձությունները զարգանան ոչ այնպես, ինչպես դուք կուզենայիք: Աստղերը խորհուրդ են տալիս լինել ուշադիր եւ զգուշավոր, խուսափել ավելորդ շփումներից, վեճերից:

### ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐ
Հնարավոր են տրամադրության կտրուկ փոփոխություններ, հուզական պոռթկումներ կամ հիվանդություն: Հավանական են սխալներ կամ վրիպումներ չարակամների խարդավանքների կամ սխալ մեկնաբանված տեղեկատվության պատճառով: Կարող է ծագել ընկերական հարաբերությունները վերանայելու անհրաժեշտություն:

### ԽԵՑԳԵՏԻՆ
Հանդարտ, պասիվ օր է: Հարկ չկա առանձնանալ կոլեկտիվից: Եթե ցանկանում եք ինչ-որ ձեւով աչքի ընկնել, ապա չարժե շտապել, միեւնույն է, չի հաջողվի: Խորհուրդ չի տրվում ծանր ֆիզիկական աշխատանք կամ գերլարում:

### ԱՌՅՈՒԾ
Օրը նպաստավոր է շփումների եւ ստեղծագործական հանդիպումների համար: Եթե հնարավորություն ունեք, երեկոն անցկացրեք տնից դուրս ինչ-որ տեղում: Դրա շնորհիվ ձեր մեջ կաճեն կենսական եւ ստեղծագործական ներուժը, մագնետիզմը եւ հմայքը:

### ԿՈՒՅՍ
Մտածողության հստակությունն ու պարզությունը կնպաստեն ձեր բարեկեցության աճին: Հարկավոր է խուսափել հապճեպ որոշումներից: Շրջապատի մարդկանց հետ ձեր հարաբերությունները կլինեն լավ եւ ջերմ: Շփումների առանձնակի հմայքն ու նրբավարությունը տղամարդկանց ուշադրությանը կարժանացնեն կին կույսերին:

### ԿՇԵՌՔ
Պասիվ, հայեցողական օր է: Խորհուրդ է տրվում հետեւել սեփական գործողություններին: Օրվա երկրորդ կեսին ձեր ինտուիցիան զգալիորեն կուժեղանա, կարող եք զգալ շրջապատի տրամադրությունները: Դա ձեզ թույլ կտա ճիշտ կողմնորոշվել ամենաբարդ իրավիճակներում, տեսնել ապագան:

### ԿԱՐԻՃ
Օրը նշանավորվում է ձեր ստեղծագործական ներուժի աճով եւ խոստանում է հաջող լինել: Ձեր գործողությունների հաջողությունը կախված կլինի վճռականությունից եւ շրջահայացությունից: Նյութական կյանքի փոփոխությունները կընդունեք հավուր պատշաճի:

### ԱՂԵՂՆԱՎՈՐ
Ձեզ սպասում է ծանր օր: Տրամադրության փոփոխությունը կամ թեթեւամտությունը ձեզ կխանգարեն գլուխ հանել նույնիսկ սովորական եւ առօրեական խնդիրներից: Բացառված չէ նյութական կյանքում ճգնաժամային իրավիճակի ծագումը:

### ԱՅԾԵՂՋՅՈՒՐ
Այսօր կկարողանաք առավելագույն չափով դրսեւորել ձեր մտավոր եւ հոգեւոր կարողությունները: Հնարավոր են հանդիպումներ ընկերների հետ, որոնց վրա փայլուն տպավորություն կգործեք ձեր սրամտությամբ: Ինչ էլ ձեռնարկեք, ձեզ սպասում է հաջողություն:

### ՋՐՀՈՍ
Հավանական է, որ գործարար ակտիվությունը տա՛ բաղձալի արդյունք: Բարեհաջող օր է ստեղծագործական մասնագիտությունների տեր անձանց համար: Գործարար գործընկերների հետ շփվելիս անհրաժեշտ է ճիշտ ընտրել պահը, որպեսզի շեշտեք հարկ եղածը:

### ՁԿՆԵՐ
Մտածեք ձեր առողջության ամրապնդման մասին: Այսօր հնարավոր են փոփոխություններ, շփումներ, նոր ծանոթություններ եւ կախվածության առաջացում: Անսացեք ձեր ինտուիցիային եւ զերծ մնացեք տհաճ շփումներից: Երեկոյան չի բացառվում ժամանակավոր անբավարարվածության զգացման ծագումը:

## Օր ծերության ապաշխարա՞նք

Ադոլֆ Հիտլերի վերջին քարտուղարուհին, որ անբուժելի հիվանդ է, որոշել է խախտել երկար պահպանած լռությունը եւ գուցե ապաշխարե՞լ: «Գրեթե հազար օր ես եղել եմ այդ հրեշի աչքերին, եղել եմ նրա կողքին, ում ձեռքերը թաթախված են 50 մլն զոհերի արյունով, հիշում է նա: Ճիշտ է, ես կամավոր էի դարձել Հիտլերի քարտուղարուհին, բայց ես ընդամենը 22 տարեկան էի, երիտասարդ էի եւ ոչինչ չէի հասկանում քաղաքականությունից: Ինչո՞ւ էի ես այդքան դյուրահավատ ու թեթեւամիտ: Մինչեւ վերջին շունչս ինձ կուղեկցի այդ արհավիրքի վայրագություններին մասնակից լինելու մեղքի զգացումը», հեկեկում է Ֆրաու Յունգեն:

Ն.Հ.

## Խաչբառ

1



2



3



- Դպրոցական հանդես
- Երգչուհի Կայլի ...
- Գանգուր
- Սատանայի եղջյուրը
- «Լեն ու բոլ» փողոց
- Սալոր շլոր, ծիրան ...
- ..., դաս, կարգ, ընտանիք
- Երդում կամ ...
- Ժամանակակից պար
- «Լոռեցի» պնդուկ
- Խաղողի որթ
- Օլեգ Գազմանովի որդին
- Կարծր վառելանյութ
- Ծաղկահյուս օղակ
- Դպրոցական միակ ճաշասենյակը
- Կրոնական «դիետա»
- Կաշառված առաքյալը
- Տուրգենեւի պատմվածք, շնիկ
- Արտադրության մեջ նյութը
- Հողի «ընտիր շերտը»
- ... եւ Ալբերտ Մկրտչյաններ
- «Անլռելի զանգակատուն», գրողը
- Կատաղած կատվի «զենքը»
- Պատժիչ, կեղեքիչ մտրակ
- «Մենք ենք, մեր սարեր»-ի գողոնը
- Պատիվն ըստ Շիրվանզադեի
- Րաֆֆու Վարդանը
- Երկար լեզվի «չափ»
- Սարքավորման «գծանկար»
- «... հայվան» («Ոսկե ցլիկը»)
- Սանկալի «արհեստը»
- Դյուրաշարժ, ճարպիկ
- Մեկ օր առաջ
- «Կրոնական» զանգանք
- Երակի տրոփյուն
- Հնացածի հականիշը
- Աղանդերային համեմունք
- Վարորդի «գրավոր սարսափը»
- ..., ստորոգյալ, լրացումներ
- Դերձակի գործ
- «Դդում» գլխով քորոց
- Այստեղից ջուր է բխում
- Քյավառում ծով է կոչվում
- Մերված կաթնաջուր
- Կարկուտի խախուտ «զոհը»
- Քուրջ, ցնցոտի, ...
- Դեմքի «շարժուձեւ»
- Ոսկոր, որ հնում «գլորում էին»

ԱԶԳ

# սկանվորդ



… եւ էսթետիկա

«… վերջին պոետն եմ ես»

… խախտող կամ օրինազանց

«Սպարտակ»-ի «քույր» բալետը

Արագ «ոտանավոր»

«Շատը գնաց, քիչը …»

Ջրաղացպանի գլխի «փոշին»

Թունավոր գազ

Երաժշտական դրամա

Չինական փոքրոկային քամի

Գերմանացի կանցլեր Օտտո …

Անոտիապաշտական «չի կարելի»

Մայրաքաղաքը Բուխարեստն է

Հեղինակություն վայելող «անուն»

Թեթեւ հրետանի



Համագումար, ժողով, …

Պարսպապատ շինություն

«Անգլուխ ձիավորը», գրողը

Աշխատանքային օր կամ 8 …

Եգիպտոս, բուրգաշատ քաղաք

Զիրք, տաղանդ, …

Ձերմուկ, Ծաղկաձոր, Սոչի

Ինքնակարգավորիչ սարք

Շատ փոքր սենյակ

Ոչխարենի, երբեմն «ոսկյա»

Իմաստուն հայ դիցուհի

Ժամանակավոր դադար

Առաջին ճաշակում

1

Դրա վրա նստում են

«Ձախորդակ» Ռիշարը

Եվրոպական վայրի ցուլ

Վայրկյանի եւ ժամի միջեւ

Կեսը կատուկ, կեսը ծծումբ

«Անշնորհք» ցորենազգի

Իտալոնային օրինակ

Փոքրիկ տուն

Բանական …

Եւ Ռուլինը, եւ Թորամանյանը

«Պատճառավոր» կին

Հայ արձակագիր … Գալշոյան



Ծերության «գործազուրկ»

4

Պովիդլոյի «ընկերուհին»

Եւ Մանարյան, եւ Կոթիկյան

Կասպյան «նավթոտ» թերակղզի

Պարոնյանական «մեծամեծ»

Ծնկա տիրոջ հայրենիքը

Դուդուկահար … Հովսեփյան

Ոչխարի մսով համեղ կարկանդակ

2

Ռանչպար կամ հողի …

«Կիսահիդրոնեցացված» կղզի

Կորոլյովայի անունը

Իտալացի տենոր Էնրիկո …

Ջութակ «արարող» վարպետ

Անասունի չորացրած աղբ

Սոճու «արցունքը»

Երկարբարակ, լայն…

Եւ ժանգ, եւ մուր

5

Պարանոց կամ …

Բաքանաղի կինը

Ագնավուրի անունը

Քաղաք Նաիրուղ ջրանցքի ափին

…, էքան, պրոպան

Կայան

… ու խոպան հող

Քամի հաջորդը

Ալադինի ընկերը

Մկից «վախեցող» կենդանի

Մի «ժանտախտ» էլ դա է

3

Ճաhճածին պարտանյութ

Ավատատեր

2-րդ կամ … Հայք

Դժոխային արարած

Տոնածառ

Նեցուկ

Կանոնավոր փուլ



Խստապահանջ ֆորմալիստ

Բերիայի «ոգնի» նախորդը

Գութանի բացած փոսը

Ռուս շաշկի, հայ …

Լծի «կողպեքը»

Ճապոնական խոհր

Թենիսի «ռաունդ»

Ժան-… Ռուսո

Կիլիկիա, 1909թ.

Վերջութային ճյուղավորում

«Պոնիով» հոկեյ

«Անշարժ» մեխանիկա



## օրվա հեռագիր

# Մենադարիշվիլին «անհեթեթ եւ հիմնազուրկ» է որակել ռուս Իվանովների հայտարարությունը

Վրաստանի արտգործնախարար Ի. րակլի Մենադարիշվիլին «անհեթեթ եւ հիմնազուրկ» է որակել Ռուսաստանի իր պաշտոնակից Իգոր Իվանովի եւ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովի հայտարարություններ, թե միջազգային ահաբեկիչ Ուսամա բեն Լադենը կարող է Պանկիսի կիրճում լինել: Մասնավորապես Սերգեյ Իվանովն ասել էր, որ չկան փաստեր բեն Լադենի Պանկիսում չլինելու մասին եւ հավանական է, որ ահաբեկիչը թաքնվում է կիրճում: Իրակլի Մենադարիշվիլին ափսոսանքով նշել է. «Դժվար է մեկնաբանել, թե ինչ նպատակներ են հետապնդում այդ հայտարարությունները: Դրանք հնչում են այն ժամանակ, երբ վրաց-ռուսական հարաբերությունները բարելավելու ջանքեր եւ էներգիա են գործադրվում»: Նախօրեին նախագահ Շեւարդնաձեն հեգնանքով ասել էր, թե հնարավոր է բեն Լադենը թաքնվում է ՌԴ արտգործնախարար Իգոր Իվանովի Ախմետայի շրջանի մայրական տանը:

Ի դեպ, Իգոր Իվանովի մանկության շրջանի մասին «Փրայմ նյուս» գործակալությանն ուշագրավ տեղեկություն է տվել արտգործնախարարի մորաքրոջ ամուսինը՝ Լեւան Սագիրաշվիլին: Իվանովի ծնողները ծանոթացել են Մոսկվայում: Իգորը մինչեւ յոթ տարեկանն ապրել է Ախմետայում: 1990-ական թթ. վերջերին Իվանովը այցելել է Ախմետա եւ գնել մայրական տունը, որը վաճառվել էր հարեւանին: Սագիրաշվիլին ասել է, որ այսօր էլ Իվանովն Ախմետայի հարազատների հետ հեռախոսով խոսում է վրացերեն, որը սովորել է մանկության տարիներին եւ չի մոռացել:

For Your Internal News of Armenia

www.azg.am

Log on to In English, Russian, Armenian and Turkish

**Հայտարարություն**

Վարձով տրվում է ոչ բնակ. տարածք Սարյան 22 հասցեում:
Ցանկացողները դիմեն՝ 56-90-80, 54-96-38:

**Բաց հասարակության ինստիտուտի Օժանդակության հիմնադրամ Հայկական մասնաճյուղ (ԲՀԻՕՀՀՄ)**

Կենտրոնական եվրոպական համալսարանի Ուսումնական ծրագրերի մշակման կենտրոնը՝ Բաց հասարակության ինստիտուտի «Աջակցություն բարձրագույն կրթությանը» ծրագրի օժանդակությամբ, հայտարարում է դրամաշնորհի մրցույթ՝ համալսարանական ուսումնական դասընթացների մշակման եւ դասավանդման համար: Ծրագրի նպատակն է՝ աջակցել նորարարական ծրագրերի ներմուծմանն ու տարածմանը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում, նախկին Խորհրդային Միությունում եւ Մոնղոլիայում, ինչպես նաեւ աջակցել սույն տարածաշրջանի գիտնականների միջառարկայական եւ միջազգային համագործակցությանը:

Մրցույթը կընդգրկի հետեւյալ բնագավառները. գրականություն, պատմություն, սոցիալական հոգեբանություն, փիլիսոփայություն, միջազգային հարաբերություններ եւ լեզվաբանություն: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել անհատական կամ խմբային հայտ:

Փաստաթղթերը ընդունվում են մինչեւ **2002 թ. ապրիլի 12-ը**: Հայտի հատուկ ձեւը, ինչպես նաեւ հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ ԲՀԻՕՀՀՄ-ի գրասենյակում, հետեւյալ հասցեով՝

Երեւան 10, Պուշկինի 1, բն. 2,
հեռ. 542-119, 541-719, 543-901, e-mail: gayane@osi.am,
ինչպես նաեւ ինտերնետում՝ www.ceu.hu/crc/odc

**TAXI Liza**

Фиксированные цены до аэропорта.
Предоставляются водители для вождения ваших машин

1 км - 70 драм

КРУГЛОСУТОЧНО
Машина подъедет к клиенту бесплатно

Музыкальный заказ на radio VAN FM 103.0

☎ 540044

"РАДИО ВАН" "РАДИО ВАН" "РАДИО ВАН" "РАДИО ВАН" "РАДИО ВАН" "РАДИО ВАН"

RADIO VAN FM 103

## ACBA բանկը

*Տրամադրում է արտոնյալ վարկեր փոքր ու միջին բիզնեսով զբաղվող կազմակերպություններին և անհատ ձեռներեցներին:*
*Վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով,*
*գործում է գրավների ճկուն համակարգ:*

*Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ACBA բանկ*

*ք. Երևան, Բայրոնի 1*
*(Պետական Կոնսերվատորիայի հարևանությամբ)*
*Հեռ. 52 51 42, 56 58 58, 56 85 85*

ACBA BANK
Հ Ա Յ Գ Յ Ո Ւ Ղ Փ Ո Խ Բ Ա Ն Կ

*Միասին դեպի բարեկեցություն*

**Երեւանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը հրավիրում է ձեզ մասնակցելու**

Գրասենյակային եւ տան համար նախատեսված կահույքի, տնտեսական ապրանքների եւ սարքերի, համակարգչային տեխնիկայի եւ օժանդակ սարքավորումների, գեներատորների եւ այլ ապրանքների աճուրդին (բաց/դասական):

Աճուրդը տեղի կունենա մարտի 3-ին, ժամը 10:00-17:00, դեսպանատան պահեստում, որը գտնվում է Արարատյան 90 հասցեում:

Ապրանքները կարող եք զննել աճուրդի վայրում մարտի 2-ին, ժամը 10:00-17:00: Ապրանքների զննումն անվճար է, եւ դուք կստանաք աճուրդի անցկացման մանրամասն պայմանները ու վաճառվող ապրանքների խմբավորված ցուցակները:

Ապրանքները կվաճառվեն «այնպես, ինչպես կան» (դեսպանատունը պատասխանատվություն չի կրում ապրանքների որակի համար):

Անձինք, ովքեր զինվոր չեն, ովքեր գնումներ անելիս ազատված չեն հարկերից եւ մաքսավճարներից, պատասխանատու են իրենց հարկային եւ մաքսային վճարումների համար հայկական պետական համապատասխան մարմիններին:

Աճուրդի հետ կապված տեղեկությունների համար զանգահարել՝

**Արտաշես Չոմոյանին 09 404 382**
**Հրաչ Ասոյանին 09 406 986**

**AMERICAN EMBASSY, YEREVAN INVITES YOU TO PARTICIPATE**

In **Auction (open bid, classic)** of office and household furniture, appliances and equipment, computers and accessories/peripherals, generators, and other assorted items. The sale will be conducted in the Embassy Warehouse, at 90 Araratian str., Charbakh district, on March 3, 2002, 10 a. m. until 5:00 p. m.

The inspection of items may be done at the sale for free on Saturday, March 2, from 10:00 AM-5:00 PM local time, and you will be provided with a list of lots and detailed instruction and terms of auction. The lots will be sold "as is, where is" **(the U.S. Embassy will not guarantee the quality of the merchandise).**

Individuals/Physical entities, who are not entitled to receive duty-free diplomatic purchases will be responsible for payment of all taxes and customs fees to the appropriate Armenian authorities.

Contact persons for auction are:
**Artashes Chomoyan: phone 09 40 43 82**
**Hrach Asoyan: phone 09 40 69 86**

«Ազգ» տպարանում. Երեւան, Բաղրամյան 70ա. Գրանցման թիվ 65. Պատվեր 69150. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 19. 02. 2002. Գինը՝ 100 դրամ